

չարլոս Ժ.-ի գահալիժում, 1848 թուականի շփոթութիւններն ընդհատելով, որից նա եզրակացնում է, որ շուտով յնդափոխութիւնը պիտի կործանէ միջին եւ հարաւային Եւրոպայի միապետութիւններն եւ Ռուսիան պիտի ստիպուի ինքն էլ ընդհանուր թշնամու ղիմադրել: Հոնգարիոյ ապստամբութիւնը ծնշելու օգնելով Աւստրիային՝ նա ծառայած է համարում իւր նպատակին եւ մեծ գոհունակութիւն է զգում:

Մարդկային մարմնի ներքին մասերի դիտումն Ռէօնտգէնի ծառագայթներով արդէն իսկ յաջողուած է: Բնութիւնի ընտանազան ընկերութեան մէջ բոլիչ Մաքս Լեւին հիւանդութիւններ ծանաչելու մասին մարմնի ներքին մասերը Ռէօնտգէնի ծառագայթներով լուստորելու միջոցները բացատրեց եւ փորձերով եւս ցոյց տուաւ: Այս գիտը պատկանում է Բնութիւնի ընդհանուր ելեկտրական ընկերութեան, որ պատրաստել է մարմնի ներքը լուսատուելու Ռէօնտգենեան գործիքը:

Կանանց սուտը. — Խոտալցի յայտնի ընտանս եւ բարքերի հետազոտող Լամբրոզոն նորերս խնդիր է յաբուցել, թէ ինչու կանայք սուտ են սիրում: Լամբրոզոյի կարծիքով կանայք աւելի են ստուռ, քան այդ մարդիկ: Այս կարծիքն ահագին փոթորիկ է հանել եւրոպական Ֆիւմենի ստաներին — կանանց պաշտպանների մէջ: Մի քանի քաղաքներ այս առթիւ հարցումներ են ուղղել կանանց բարքերը ծանաչող հեղինակաւոր անձանց, գրեթէ ամէնքի կարծիքն էլ համաձայնում է Լամբրոզոյի կարծիքի հետ: ամէնքն էլ այն կարծիքի են, որ կանայք ստուռ են թուլութեան պատճառով: Թոյլի զէնքը սուտն է, այդ հաստատուում է ամենուրեք կատարած հետազոտութիւններով:

Виржевая Вѣдомости քաղաքը հաղորդում է, որ մի քանի հոգեւոր սեմինարիաներում ընդհանուր բժշկական գիտութիւնների դասատուութիւն մտցնելը սրանից երեք տարի առաջ իրեն փորձ ունեցաւ շատ լաւ հետեւանք: Այդ պատճառաւ մտադրութիւն կայ այդ դասատուութիւնը մտցնել առանց բացառութեան բոլոր հոգեւոր սեմինարիաներում: Վիժնակային իշխանութեանը առաջարկուած է արդէն հոգ տանել գտնելու դասատուներ, որպէս զի բժշկութեան տարրական առարկաների դասատուութիւնը սկսվի ներկայ ուսումնական տարուայ սկզբից:

Փրանսիական պատգամաւորների ազգային ժողովում պատգամաւոր Բերրի-ի (I. Berry) հարցին ազգային լուստւորութեան նախարար Բէմբո (Raimbaud) պատասխանեց, թէ, ծննդից է, 1872 թուականի օրէնքը, որ օտարերկրացի ուսանողներին տալիս էր իրաւունք ստանալ Փրանսիայում բժշկապետի դիպլոմ՝ յառաջ քննաւ մի քանի զեղծումներ, եւ այժմ նախարարութիւնը մտածում է դրանց առաջն առնելու միջոցներ գտնել: Այս տարի Փրանսիայի բոլոր բժշկական բաժիններում հաշւում են 1034 օտարերկրացի ուսանողներ, այսինքն 12% ընդհանուր թուի: Այդ օտար ուսանողների մեծամասնութիւնը բաղկանում է ռուսներից, բուլղարներից, բուլղարներից եւ յոյներից:

* Ռուսներ 314, թուրքեր 150, եգիպտացի 12, բուլղարներ 147, բուլղարներ 133, յոյներ 45, ուրեմն շարունակում է ընթաց, մեզ մեա գալիս են սովորելու կամ քաղաքական կեանքի համար նորատի ազգերը, որպէս

Բոլորովին փակել դրանց առաջ բժշկական բաժանմունքների դռները, այդ կը լինէր սխալ, որովհետեւ դրանցից շատերը սովորում են Փրանսիայում միայն նրա համար, որ յետոյ վերադառնան իրանց հայրենիքը: Լաննելոն (Lannelongue) պրօֆեսօրի պահանջի համեմատ այդ հարցը մնաց Ազգային ժողովի պատգամաւորների հայեցողութեանը, որ եւ վճռեց հետեւեալ կերպով. «Ցանկանալով միաժամանակ պահպանել Փրանսիացի բժիշկների եւ բարձրագոյն ուսման օգուտները, պատգամաւորների ժողովը հրաիքում է կառավարութեան 1) թոյլ շտալ պրակտիկայով պարագել Փրանսիայում օտարերկրացի բժիշկներին. 2) բժշկութեան դիպլոմ Փրանսիայում պրակտիկայով պարագելու իրաւունքով տրուի միայն այն ուսանողներին, որոնք կը ներկայացնեն միջնակարգ ուսումնարանի՝ գիմնազիայի վկայական (Garde de bachelier), որ պահանջուում է Փրանսիացի ուսանողներից. 5) տալ որքան կարելի է ազատութիւն այն օտարներին, որոնք ցանկանում են ուսումնասիրել Փրանսիայում բժշկութիւնը եւ ստանալ բժշկութեան դիպլոմը միայն պատուի համար, առանց պրակտիկայով պարագելու իրաւունքի (titre de docteur purement honorifique):»



ԱԶԳԱՅԻՆ.

ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ՈՒՂԵՑՈՅՑԸ.

Մի ժամանակ կար, երբ քրիստոնեայ Հայոց առջև պատրաստ էին կորստեան ճանապարհները: Ժողովուրդն անյոյս խաբսափում էր խաւարի խորխորաաներում: սերունդ սերունդի յաջորդում էին առանց գիտեանալու քրիստոնէական կեանքի խորհուրդը: Զորքորդ դարու կէսն էր այդ վտանգաւոր ժամանակը, աւելի քան 1500 տարի սորանից յառաջ: Զրիստոնեայ ծնուած եւ քրիստոնեայ մկրտուած թագաւորներ, նոցա հետ եւ նախարարներ ու իշխաններ, նոցա հետ եւ ժողովուրդի ստուար բազմութիւնը անորժեկով պահում էին իրենց հիթանոսական բարբերը: Զրիստոնեայ անուն կրելով, նոքա ապրում էին քրիստոնէական զաղափարների հակառակ: Հայոց սուրբ Հայրապետներն եւ վարդապետները, նմանապէս եւ նոցա հետեօղ ժողովուրդը, կարծես, անգոր էին մաքառելու այդ ֆիասական երևոյթի դէմ, որովհետեւ անհաւասար եւ անհամեմատ ոյժերի կռիւ էր այդ: Զրիստոնէական զաղափարի ջատագոյները չունէին ոչ այն իշխանական դիրքը, ոչ այն զինուորութիւնը եւ ոչ իսկ այն նիւթական ոյժը, որոնցով

բուլղարները, բուլղարները կամ գիտութեան համար նորատի տղերքը, ինչպէս ռուսները. (nouvellement nées a la vie scientifique, comme la Russie). „La Médecine moderne” 13 յունիս 1896:

օժտուած էին հակառակորդները Այդ պատճառով չարիք չարիքի յաջորդում էր կարծես շատ բնական կերպով և մոլորութիւնն աճում ու զօրանում էր քրիստոնէութեան մշակներէ ջանքին և ակնկալութեան հակառակ:

Այդ կարելի է տեսնել շատ պատմական փաստերից: Թողնե՛ք այն որ Հայոց նորահաւատ նախարարները ձանձրանալով մահազեղ տուին ս. Տրդատին կամ Հայոց Թագուհին զրդեց Տարօնի լեռնականներին սպանելու ս. Վրթանէսին և կամ այսպիսի ուրիշ չար գործեր: որ տեղի ունեցան Հայոց քրիստոնէութեան առաջին տարիներում: Մենք գիտենք, որ Տիրան Թագաւորը բրածե՛ծ անել տալով մեռցնում է ս. Եւսիկին նորա համարձակ յանդիմանութեան համար և խեղդել է տալիս Տերունի Դանիէլին նորա յայտնած արդար բողոքի համար: Արշակ Թագաւորը ձանձրանալով Մեծն Երեսիսի խրատներից անարդար կերպով զրկում է նորան կաթուղիկոսութիւնից և արքունի ստրուկ Զոնակին է դնում կաթուղիկոս: նոյն Արշակը չի խղճահարում աւազակների և մահապարտների համար բնակութեան քաղաք հաստատելու իւր Արշակաւանը և նոցա ազատութիւններ ու արածուութիւններ տալու: Թէ նա և Թէ իւր մերձաւորներն ազատօրէն գործ են դնում անդթութիւններ: որոնք սովորական գործեր են համարում: Փառանձմի պտտճառով Գնէլի անմեղ արիւն Թափելու Ողիմպիադա Թագուհուն թոյնով մեռցնելու սայլապան գիւլաջիւններին խմբելով կոտորել տալը և այլ այսպիսի չար գործերը Արշակի համար անմեղ բաներ էին: Արշակից պակաս չէր նորա որդին Պապ որ բացարձակ զինուեցաւ իւր բարերար Մեծն Երեսիսի գէմ կարծես միմիայն ձանձրացած լինելով քրիստոնէութիւնից: նա թոյնով սպանեց Մեծն Երեսիսին: փակեց նորա բացած և հաստատած աղքատանոցները որբանոցները: հիւանդանոցներն և այլ բարեգործական հիմնարկութիւնները: հալածեց զրեթէ ամբողջ քրիստոնէական կրթութիւնը և ասպարէզ տուեց մոլորութեանն և անտարբերութեանը: Վասնզոր մեծ էր և առաւել մեծացաւ քանի որ հարեան Պարսից տէրութիւնը վաղուց հետամուտ էր հաստատելու Հայոց մէջ կրակապաշտութիւն: Դեռ Արշակի ժամանակ Հայոց նախարարներից մէկը Մեհրուժան Արծրունին իւր հոգին ծախեց Պարսից Թագաւորին և Հայոց Թագաւոր լինելու խաբուսիկ յոյսը գնեց: նա ուրացաւ քրիստոնէութիւնն և կրակապաշտութիւն ընդունելով Պարսից զօրքերով եկաւ Հայաստան և բռնու-

թեամբ տարածել ուղեց կրակապաշտութիւնը: կոտորածը աւերածը զերութիւնը և խռտանդանքներն անպակաս եղան նորա շնորհիւ: նա այրել տուեց բոլոր աստուածաշունչ զրքերը և զերի վարեց քահանաներին թէպէտ և Աստուծոյ զինուորները Մեծն Երեսիսի առաջնորդութեամբ խորտակեցին այդ ամբարտաւանի գլուխը և ի դերեւ հանեցին նորա խորհուրդները: սակայն Պապի ապերախտութիւնը նորից պտտաւ եղաւ վտանգի զօրանալուն: մանաւանդ որ եկեղեցական դասն էլ արդէն նիւթ էր տալիս այդ նոր վտանգին: Մեծն Երեսիսի յաջորդներից մէկը Զաւէն և նորա հեռեւորները թողել էին առաքելական աւանդութիւններն և ապրում ու գործում էին ըստ աշխարհի: նոքա սկսեցին փարթամ կեանք վարել ուրիշ զարդարուն զգեստներով և մուշտակներով: հրամայեցին քահանաներին փոխել իրենց զգեստը և զինուորական ձեով կարճ զգեստ հագնել: «պճղաւորը» տեղի տրուեց «խոտորկոտը» հանդերձներին: և նորան համեմատ հոգեօրականի համեմտ և չափաւոր կենցաղը մարմնական կեանքի հեշտութիւններին: «թողին զիրօն առաքելական և սկսան զնալ ըստ իւրեանց մտաց» ասում է Փաւստոս բոլորի համար: «որկորստութեամբ ազահութեամբ անառակութեամբ կեայր» ասում է Զաւէնի համար:

Եթէ մեծերն առաջնորդներն այսպէս էին ի՞նչ կարելի է մտածել նոցա մօրի տրուող ժողովրդի մասին: Վախճանը պարզ էր: Հայի ժամը հասել էր և Պարսիկը կամ Յոյնը կարող էին միանդամայն յափշտակել Հայի ինքնուրոյնութիւնը և այս մանաւանդ այն պատճառով որ քրիստոնէայ Հայոց կրթութեան գործն էլ շատ վտանգաւոր վիճակի մէջ էր: Եկեղեցու պաշտօնականները մեծ մասով յոյն և ասորի մարդիկ էին: Աստուածաշունչ ա-հիրքը յունարէն և ասորերէն էր: այդ երկու լեզուներն ուսանելու համար Հայ մանուկները մեծ դժուարութիւն և ծախք էին կրում: հեռու ծանապարհներ էին անցնում երկար ժամանակ էին գործ դնում և օտար ուսուցիչների մօտ էին զեգբում: Այսպիսով կրթութեան և լուսաւորութեան գործը չէր յառաջանում: մինչդեռ օտարների այսինքն յոյների պարսիկների և ասորիների ազդեցութիւնն օրրասօրէ զօրանում էր և Հայոց բարբի մեծ փոփոխութիւն էր յառաջ բերում: այն է օտարասիրութիւն կամ անտարբերութիւն երկու շատ փնասակար երեւոյթներ: որոնց առաջն առնելու կարեւորութիւնն զգալի էր և ստիպողական:

Ահա այդպիսի ներքին ծանր տազնապի ժամանակ հանդէս է գալիս դ. դարի վերջերում մի նոր երիտասարդութիւն. այդ երիտասարդութեան պարագլուխներն էին՝ ս. Սահակ Պարթև, Մեծն Ներսիս որդին, և ս. Մեսրոպ Մաշտոց, Մեծն Ներսիսի աշակերտը։ Սոցա սրտի մէջ եռում էր հայրենիքի վերածրնութեանը նպատակը տենչը. և այն ժամանակի երբ Զաւէն և իւր հետեւողները, մոլորութեան առաջնորդ եղած, կենցաղասիրութեան կողմն էին գրաւում առանց այն էլ հեթանոսամիտ Հային, Սահակ և Մեսրոպ թողած իրենց աշխարհային փառքն ու հանգրստութիւնը, որ ունէին առատութեամբ, ելան իրենց աշակերտներով և ընտրեցին առաքելութեան փշալից ասպարէզը. խարաղն հագած, բորիկի աղքատ և անինչ, անքուն կրօնաւորի կեանք ընդունելով, նոքա ցերեկը շրջում էին ժողովրդի մէջ և տարածում էին կեանքի քարոզութիւնը՝ Զրիստոսի վարդապետութիւնը, իսկ դիշերն անձնատուր էին լինում աղօթքի և աստուածապաշտութեան. ս. Սահակի հետ էին վաթսուէն աշակերտ, որոնք նորանից անբաժան էին և նորա հետ միասին շրջում և քարոզում էին երկրի զանազան կողմերը, ս. Մեսրոպ ևս իւր աշակերտներով անցաւ Գողթան դաւառն և այնտեղ սկսեց իւր վարդապետութիւնը, զինուելով հեթանոսութիւնից մնացած մի աղանդի դէմ, որ բնաջինջ արաւ։ Այսպէս Հայ ժողովրդի մէջ երիտասարդ կրօնաւորների բերանով հնչեց ս. աւետարանի կենդանի ձայնը. այդպիսի քարոզութեան ժամանակ ծանօթացաւ Հայ ժողովուրդն իւր հոգեւոր մշակների իսկական արժանիքին. շատ չքաշեց, որ յոսրով թագաւորի ազդեցութեամբ ս. Սահակ ընտրուեցաւ Հայոց կաթողիկոս և նորա ընկերի ու աշակերտների առաջ բացուեցաւ աւելի ընդարձակ ասպարէզ գործելու. նոյն համեստ խարաղնազգեստ, բոկոտն, կամաւոր աղքատներն անդուլ եռանդով գործեցին կեանքի քարոզութեան գործը հեշտացնելու. ս. Մեսրոպին և ս. Սահակին ականքն էին, որ այդ գործի դժուարութիւնը Աստուածաշունչ ս. Գրքի հայերէն չինելու մէջ էր։ Եւ ո՞վ ստեղծեց հայերէն ս. Գիրքն, եթէ ոչ այդ կամաւոր աղքատների խումբը, ո՞վ սկիզբն դրեց Հայոց ազգային դպրոցի, եթէ ոչ նոյն խումբը, ո՞վ տուեց մեզ ազգային ձոխ գրականութիւն, եթէ ոչ նոյն այն խումբը։

Մի ժամանակ կար երբ Հայոց ազգի առաջ պատրաստ էին կորստեան ճանապարհներն։ Անցաւ այդ ժամանակը։ Սուրբ Հայրերի շնորհիւ Հայ ազգը դառաւ իւր փրկութեան ու-

ղին։ Այդ է կեանքի մեծ զիրքը՝ ս. Աւետարանը, որ նոցա աշխատութեամբ հայերէն թարգմանուեցաւ և ամէնին հասկանալի, ամէնին մատչելի մի գանձ եղաւ։

Դարեր անցան. կեանքի դառն պայմանները շատ անգամ տեսակ տեսակ կորստական ճանապարհներ պատրաստեցին. բայց Հայի կեանքը չվտանգուեցաւ. ամէն անգամ հանդէս եկան ս. Հայրերի շաւղններին հետևող կամաւոր աղքատների որոնք ժողովրդին մխիթարելու հոգեւոր առաքելութիւնն ստանձնելով, փարատեցին երկիւղը և պահպանեցին իրենց հասած սուրբ աւանդը։

Արդի ժամանակիս մէջ Հայ ժողովրդի համար դարձեալ և միշտ պատրաստ են և կլինին, նոյն կորստեան ճանապարհները։ Սակայն ո՞վ է, որ պիտի մաքառի, ո՞վ է, որ պիտի ազատէ Հայ ժողովրդին մոլորութեան վերահաս վտանգից։ Մեր ս. Հայրերի վսեմ օրինակին հետևելու ընդունակ և պատրաստակամ մարդիկ, որոնք կը յօժարեն նոյն օրինակով ցոյց տալ ժողովրդին փրկութեան ուղիղ ճանապարհը, որոնք յանձն կառնեն նոյն կամաւոր առաքելութիւնը՝ մոնելու ժողովրդի մէջ և տարածելու կեանքի ուղեցոյց ս. Աւետարանը։ Մոլորութիւններով հարուստ այս ծանր ժամանակիս մէջ, երբ զանազան անձնրտիր ինքնակոչ ուղեցոյցներ մոլորեցնում են ժողովրդին, ս. Աւետարանի քարոզութեան ձայնը անլուրի պէտք է հնչէ ժողովրդի ականջում, այնտեղ, այն քարոզութեան մէջ, է մեր փրկութեան աւետիքը, այնտեղ միայն մենք կարող ենք ուսանել սիրոյ և կրօնայրութեան վարդապետութիւնը։ Հայոց ազգի բազմաբիւր սերունդները դարեր շարունակ դառն ու թըշուառ հանգամանքների մէջ անվտանգ ելան այդ յաւիտենական ուղեցոյցի առաջնորդութեան տակ։ Շատ դարեր շատ ու շատ նեղութիւնների համբերեցին նոքա միակայն այն պատճառով, որ վարժուած էին օրհնել անիրիւնքներին, սիրել թշնամիներին և բարի անել ատելիներին, առաքիլութիւններ, որոնք այնքան հեռու են այսօր մեր կեանքից։ Չնայելով տարօրինակ պատմական բաղդին, որ անխափան է եղել միշտ Հայ քրիստոնէի չարքաշ վիճակից, նոքա մեր նախնիք, արժանապէս պարծենում էին մարդկութեան Փրկչի անուանով, զի ուսան իրենց վարդապետներից և տեսան թէ ո՞ր է տանում Մեծ վարդապետի յաւիտենական խօսքը, թէ Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք։ Ահա մեր փրկութեան, մեր կեանքի իսկական ուղեցոյցը. զը-

նա՛նք նորա յեաւելոյ և ոչ մի կորստական անդունդ չպիտի կարողանայ յափշտակել մեզ իւր ծոցը:

Կ. Կ.

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՒ.

Յուլիսի 22-ին Նորին Կայսերական Մեծութեան Մայր Թագուհի Կայսրուհոյ անուանակոչութիւն տօնի առթիւ Ազգիս Վեհափառ Հայրապետն ուղղեց հետեւեալ շնորհատրութեան հետագիրը՝

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳՈՒՀԻՈՅ ԿԱՅՍՐՈՒՀԻՈՅ ՄԱՐԻԱՅ ՅԷԺՌՈՐՈՎՆԱՅ.

Համակեալ ի զգացումն անյեղլի անձնուիրութեան՝ բարդ անձին համարիմ մատուցանել զիմ և զհօտին իմոյ շնորհաւորութիւնս յայս հանդիսաւոր օր Անուանակոչութեան Ձերդ Կայսերական Մեծութեան: Վերառաքեմ ջերմագին աղօթս առ Բարեգութն Աստուած ի պարգեւել Ձեզ, Ամենաբարեպաշտ Թագուհի, կատարեալ երջանկութիւն և քաջաւոքութիւն ի բազում և ի բազում ամս:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒԴԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Այս շնորհատրութեան ստացունցաւ Նորին Մեծութիւնից հետեւեալ պատասխանը.

ԷՉՄԻԱՄԻՆ

ԿԱԹՈՒԴԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. ՄԿՐՏԻՉԻ.

Խնդրեմ ի Ձերդ Երանութենէ ընդունել զհաւաստիս անկեղծ երախտագիտութեան իմոյ և յայտնել հօտին Ձերոյ զշնորհակալիս իմ վասն աղօթիցն, շնորհաւորութեանց և բարեմաղթութեանց, ընդ որս զգածեալ եմ ի խոր:

ՄԱՐԻԱ.

Նորին Սրբութիւն Աեհափառ Հայրապետը կարեւոր գործերի պատճառաւ չկարողանալով շարունակ Բիւրական ամարանցում մնալ, յունիս 17-ից ի վեր ստիպուած է եղել մի քանի անգամ Մայր Աթոռ իջնել և վերադառնալ:

— Յունիս 25-ին ս. Պատարագից յետոյ Մայր տաճարում կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստ ի յիշատակ Մեծազօր Նիկողայ Ա. Կայսեր ծննդեան հարիւրամակի: Պատարագին էր Գեր. Երիստակէս եպիսկոպոս Դաւթեան. իսկ հոգեհանգստից առաջ օրուայ հանդիսի առթիւ խօսեց Գեր. Սուքիաս Արքեպիսկոպոս: Համառօտակի յիշելով հանգուցեալ Կայսեր, իրրեւ նոր ժամանակի մի ամենաշնանաւոր գահակալի՝ բազմաբովանդակ կենաց գլխաւոր դէպքերը, Սրբազանը կանգ առաւ մասնաւորապէս նորա, իրրեւ Կովկասի տիրապետողի գործունէութեան վերայ. յառաջ բերաւ մի քանի տեղեկութիւններ Նորա մեր երկրում կատարած ճանապարհորդութիւնից, համեմատեց Կարապետ արքեպիսկոպոսի և Յովհաննէս Կաթողիկոսի հետ ունեցած տեսակցութիւնները, Ապա այս համեմատութեան հետ կապելով նաև այն տպաւորութիւնը, որ ս. Էջմիածնի Սինդոքի և Միաբանութեան անմիջութար վիճակը պէտք է թողնէր իմաստուն Կայսեր վերայ՝ Գեր. Քարոզին ազգու խօսքերով յորդորեց լինել այնպէս քաջարթուն և միաբան ջանքից ս. Էջմիածնի Աեհ. Աթոռակալի, որ եթէ Տեառն յաջողութեամբ Նիկողայ Ա.-ի արժանաւոր ժառանգ և անուանակից մեր այժմեան Օգոստոսփառ Կայսրը նոյնպիսի ճանապարհորդութիւն յանձն առնէ մի օր, ամէնքիս մէջ դէպի Իւր Գահն ունեցած հաւատարիմ զգացմանց հետ մէկ տեղ կատարեալ անձնուիրութիւն գտնէ դէպի մայրենի ս. Եկեղեցին և հայրենական ս. աւանդները, պատկառանք ազդող միաբանութիւն և գործունէութիւն: — Հոգեհանգստից յետոյ մաղթանք կատարուեցաւ ներկայ Կայսեր կենաց համար:

— Յուլիս 2-ին գիշերը Մայր Աթոռ ժամանեց Թագադրութեան հանդիսի համար իրրեւ Կաթողիկոսական պատգամաւոր Մոսկուա և Ս. Պետերբուրգ գնացած Սինդոքի անդամ Գեր. Երեմիա արքեպիսկոպոսը, ուղեկցութեամբ Երեւանի թեմ. Տեսուչ Արժ. Մեսրոպ վարդապետի:

— Աերջին երկու շաբաթուայ ընթացքում Մայր Աթոռը հիւրընկալել է Գեր. Յովհաննէս եպիսկոպոս Յարութիւնեանին, որ Սեանից գալով շուտով Տաթևի վանքը պիտ ուղևորուի իրրեւ միաբան. Արժ. Յովհաննէս վարդապետ Բազունուն, որ հոգեւոր հովիւ էր Պարսկաստանի Ղարաբաղ գաւա-